

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

29.10.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 56 անդամներից ներկա էին 49-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Օտար լեզուների և բնագիտաաշխարհագրական ֆակուլտետների ղեկանների ընտրություն:
Ձեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան
2. 2013-2014 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփում և վերլուծություն:
Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան
3. Գիտելիքների գնահատման և բողոքարկման վերամշակված ընթացակարգի հաստատում:
Ձեկ.՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան
4. Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կանոնակարգի հաստատում:
Ձեկ.՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան
5. ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչների որակի բարձրացման նպատակով աշխատաժամանակի ընթացքում վերապատրաստման դասընթացներին մասնակցության, հաջորդ կրթական մակարդակներում /մագիստրատուրա, հետազոտողի աստիճան/ սովորելու դեպքում ուսումնառության կազմակերպման, իրականացման,

ինչպես նաև պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստում իրականացնող դասախոսների վարձատրման հարցեր:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

6. Ընթացիկ հարցեր:

6.1. Լեզուների ուսուցման կենտրոնի ստեղծում և կանոնակարգի հաստատում:

Ձեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

6.2. «Հոգեբանական ծառայություն և խորհրդատվություն» կենտրոնի ստեղծում ու կանոնադրության հաստատում:

Ձեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

6.3. Տնտեսական բաժնի վարիչի հաստիքի ստեղծման մասին:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՎԵՑԻՆ - 49 անդամներ. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. **ԼՍԵՑԻՆ.** - Օտար լեզուների և բնագիտաաշխարհագրական ֆակուլտետների ղեկանների ընտրության հարցը (**Ձեկ.**՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը հակիրճ ներկայացրեց բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի ղեկանի թափուր պաշտոնի թեկնածու Անահիտ Գրիգորյանի և օտար լեզուների ֆակուլտետի ղեկանի թափուր պաշտոնի թեկնածու Թամարա Մելիքյանի կենսագրությունները՝ մասնավորապես շեշտադրելով թեկնածուների գիտական աստիճանները, կոչումները, վերջին 5 տարիների ընթացքում հրատարակած գիտական աշխատությունները (քանակական ու որակական տեսակետից), մասնացկությունը միջազգային գիտաժողովիներին ու ստացած պարգևները: Ա. Ֆարմանյանը հավելեց, որ Ա. Գրիգորյանն առաջադրվել է բնագիտաաշխարհագրական

Ֆակուլտետի 2 կառուցվածքային ստորաբաժանումների՝ կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ու դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների կողմից, իսկ Թ. Մելիքյանի դեպքում առկա է ինչպես ինքնաառաջադրումը փաստող դիմում, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի կողմից առաջադրում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան Ս. Հայրապետյանը, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Գ. Ամբարդարյանը:

Ս. Ալեքսանյանն իր խոսքում նշեց, որ Ա. Գրիգորյանին վաղուց է ճանաչում: Նա արդեն 1 անգամ ղեկավարել է բնագիտաաշխարհագրական ֆակուլտետը և նրա ղեկավարման ընթացքում ֆակուլտետում տիրել է առողջ մթնոլորտ, ֆակուլտետի ամբիոնների միջև եղել է ակտիվ համագործակցություն: Բացի այդ, ֆակուլտետում կան լուրջ ուսումնական, գիտական հաջողություններ: Հատկանշական է այն, որ վերջին տարիներին բավական մեծ է գիտական ատենախոսություններ պաշտպանողների թիվը: Նկատելի է նաև ֆակուլտետի երիտասարդացմանն ուղղված քաղաքականությունը: Նա կարևորեց Ա. Գրիգորյանի աշխատանքները, որոնք նա իրականացնում է ՀՀ ԳԱԱ Կենսաքիմիայի ինստիտուտի հետ համատեղ: Այդ աշխատանքները հրատարակվել են մասնագիտական ամսագրերում: Այս տարի նա 3 աշխատանք է հրատարակել: Հաշվի առնելով նվիրումը գործին՝ Ա. Գրիգորյանը կարող է ևս 1 ընտրաժամկետ որպես դեկան ղեկավարել ֆակուլտետը:

Ինչ վերաբերում է օտար լեզուների ֆակուլտետին, ապա նա շնորհակալություն հայտնեց այդ ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Մելքոնյանին՝ իր ծավալած գործունեության

համար: Հ. Մելքոնյանը ֆակուլտետի կառավարումը սկսել է բարդ ժամանակահատվածում, սակայն կարճ ժամանակում կարողացավ հասնել հաջողության:

Ինչ վերաբերվում է Թ. Մելիքյանին, ապա նա արդեն եղել է ռուս և արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, և, համապատասխանաբար, ունի կուտակված աշխատանքային փորձ ու կկարողանա ղեկավարել օտար լեզուների ֆակուլտետը:

Ա. Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց Հ. Մելքոնյանին՝ կարևորելով նրա մասնագիտական, կազմակերպչական ընդունակությունները, որոնց շնորհիվ կարողացել է համախմբել ֆակուլտետի աշխատակիցներին: Նա հավելեց, որ այն գործը, որն իրենք սկսել էին Հ. Մելքոնյանի հետ, հուսով է՝ սիրով կշարունակեն Թ. Մելիքյանի հետ: Առողջ աշխատանքային համագործակցության համար լավ նախապայման համարեց այն, որ Թ. Մելիքյանը վայելում է ինչպես ուսանողների, այնպես էլ կոլեկտիվի հարգանքը:

Ս. Հայրապետյանը Ա. Գրիգորյանին բնութագրեց որպես «օրինակելի ղեկան», ում կատարած աշխատանքներն արժանի են գովեստի, իսկ Թ. Մելիքյանի մասին նշեց, որ հրաշալի մարդ է, մասնագետ և կառավարիչ: Նա նույնպես բարձր գնահատեց Հ. Մելքոնյանի կատարած աշխատանքը:

Գ. Ամբարդարյանը հույս հայտնեց, որ Թ. Մելիքյանը կկարողանա համախմբել ֆակուլտետի աշխատակիցներին կառուցողական գործունեություն իրականացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել՝ բնագիտաաշխարհագրական ու օտար լեզուների ֆակուլտետների ղեկանների փակ (գաղտնի) քվեարկություն:

ՔՎԵԱՐԿՆԵՑԻՆ - 49 անդամներ. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին փակ (գաղտնի) քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված

հաշվիչ հանձնաժողով՝ փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփոխելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Մաթևոսյան Ազատը,
2. Խաչատրյան Վալերին,
3. Մերոբյան Բաբկենը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մաթևոսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

| Թեկնածուի ազգանուն, անուն | Կողմ | Դեմ | Անվավեր |
|---------------------------|------|-----|---------|
| Գրիգորյան Անահիտ | 48 | 1 | 0 |
| Մելիքյան Թամարա | 46 | 3 | 0 |

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները, որոնց համաձայն.

1. Գրիգորյան Անահիտը 5 տարի ժամկետով ընտրվեց բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնում:
2. Մելիքյան Թամարան 5 տարի ժամկետով ընտրվեց օտար լեզուների ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

2.ԼՍԵՑԻՆ.- 2013-2014 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփումը և վերլուծությունը (**Ձեկ.**՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան):

Բ. Պողոսյանի ներկայացմամբ 2013-2014 ուստարում առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելություն է կազմակերպվել 30 մասնագիտությունների գծով: Դիմորդներ չեն գրանցվել մասնավորապես տեխնոլոգիա և ձեռնարկչություն, բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտություններից: Մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, գերմաներեն լեզու և գրականություն, ֆրանսերեն լեզու և գրականություն, թարգմանչական գործ (անգլերեն-հայերեն), ռուսաց լեզու և գրականություն, մանկավարժություն և հոգեբանություն

(մախադպրոցական) մասնագիտությունների գծով գրանցվել են առավելագույնը 5 դիմորդ և ընդհանուր թվով 27 դիմորդներից հրամանագրվել են 21-ը: Առաջին հայտով բուհ են դիմել 425 դիմորդ և հրամանագրվել են 322-ը: Այսինքն՝ բուհի դիմորդների մոտավորապես 76 %-ը հաղթահարել է դրական շեմը: Բուհին հատկացված 71 պետպատվեր տեղից զբաղեցվել են 64-ը (մոտավորապես 90 %), վճարովի 573 տեղից՝ 258-ը (մոտավորապես 45 %): Ընդհանուր հատկացված 644 տեղի դիմաց ընդունվել են 322-ը (մոտավորապես 50 %): Նա հավելեց, որ ևս 3 դիմորդ, լինելով սփյուռքահայ, ԿԳՆ-ի կողմից հրամանագրվել է անվճար համակարգում: ԳՊՄԻ համեմատաբար շատ են դիմել Գյումրու թիվ 7, թիվ 20, թիվ 22, թիվ 41 դպրոցների, ինչպես նաև Ֆոտոն, Ակադեմիական վարժարանների շրջանավարտները: Գյումրու դպրոցների շրջանավարտներից ինստիտուտ են ընդունվել 200: Շիրակի մարզի համայնքների դպրոցներից՝ 117, Երևանից՝ 2, Արագածոտնի մարզից՝ 2, ԼՂՀ-ից՝ 1 դիմորդ:

Մագիստրոսի կրթական ծրագրով բուհը կազմակերպել է ընդունելություն 16 մասնագիտությունների գծով: Ֆիզիկական կուլտուրա և սպորտ մասնագիտության գծով ընդունելություն չի գրանցվել: 38 պետպատվերի դիմաց ընդունվել են 36-ը (մոտավորապես 95 %), 206 վճարովի տեղերի դիմաց 144-ը (մոտավորապես 70 %): 216 դիմորդներից ընդունվել են 180-ը (մոտավորապես 83 %): Ընդհանուր հատկացված 244 տեղի դիմաց ընդունվել են 180-ը (մոտավորապես 74 %):

Հատկանշական է այն փաստը, որ ԳՊՄԻ-ն ստացել է 2014-1015 ուստարում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճանով առկա ուսուցմամբ «հոգեբանություն» մասնագիտության գծով գործունեության լիցենզիա:

ԳՊՄԻ-ի շրջանավարտներից մագիստրատուրա են դիմել 191-ը, որոնից 99-ը՝ նույն մասնագիտությամբ, իսկ 92-ը՝ այլ մասնագիտությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Հ. Հարոյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

Հ. Հարոյանին հետաքրքրեց 2012-2013 ուստարում բուհ ընդունված ուսանողների սեռային հարաբերակցությունը:

Հ. Հարոյանի հարցին ի պատասխան Բ. Պողոսյանը նշեց, որ բակալավրիատի համակարգ ընդունվողների արական ու իգական սեռերի հարաբերակցությունը համապատասխանաբար 89:348 է, իսկ մագիստրատուրայի համակարգում՝ 20:199:

Ս. Սարգսյանը հետաքրքրվեց, թե կա՞ն արդյոք տվյալներ այն մասին, թե յուրաքանչյուր մասնագիտության գծով ո՞ր դպրոցների շրջանավարտներն են դիմել ԳՊՄԻ և ի՞նչ թվաքանակով:

Այդ հարցին Բ. Պողոսյանը պատասխանեց, որ, օրինակ, Գյումրու Ֆոտոն վարժարանից ԳՊՄԻ-ի ֆիզմաթ ֆակուլտետ է դիմել 2 ուսանող, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետ՝ 9, ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետ՝ 1, օտար լեզուների ֆակուլտետ՝ 5, պատմաբանասիրական ֆակուլտետ՝ 5 ուսանող:

Ս. Ալեքսանյանը հետաքրքրվեց, թե կա՞ն այլ բուհերից մեր ինստիտուտ ընդունված ուսանողներ:

Բ. Պողոսյանը պատասխանեց, որ ԵՊՀ-ից կա 8 ուսանող, ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղից՝ 1 ուսանող, ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղից՝ 1 ուսանող:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- Գիտելիքների գնահատման և բողոքարկման վերամշակված ընթացակարգի հաստատման հարցը (**Ջեկ.**՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան):

Ս. Հայրապետյանը հակիրճ ներկայացրեց գիտելիքների գնահատման և բողոքարկման վերամշակված ընթացակարգի բովանդակությունը, ընթացակարգի կրած մասնակի բովանդակային փոփոխությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, դոցենտ Ա. Ֆարմանյանը, դոցենտ Լ. Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել գիտելիքների գնահատման և բողոքարկման վերամշակված ընթացակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ, կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կանոնակարգի հաստատման մասին (**Ջեկ.**՝ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ս. Հայրապետյան):

Ս. Հայրապետյանի ելույթի գլխավոր բաղադրիչներն էին.

- պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կանոնակարգի ելակետային դրույթները,
- պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացի առանձնահատկությունները,
- բուհում վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման ելակետային բաղադրիչները,
- վերապատրաստման արդյունքների ամփոփման և գնահատման էությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ե. Վարդանյանը, գիտքարտուղար Թ. Խաչատրյանը, Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման

մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման կանոնակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչների որակի բարձրացման նպատակով աշխատաժամանակի ընթացքում վերապատրաստման դասընթացներին մասնակցության, հաջորդ կրթական մակարդակներում /մագիստրատուրա, հետազոտողի աստիճան/ սովորելու դեպքում ուսումնառության կազմակերպման, իրականացման, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստում իրականացնող դասախոսների վարձատրման հարցերը (**Հաղ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. ԳՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչների որակավորման բարձրացման նպատակով թույլատրել նրանց մասնակցելու վերապատրաստման դասընթացներին և հաջորդ կրթական մակարդակներում /մագիստրատուրա, հետազոտողի աստիճան/ սովորելու դեպքում կազմակերպելու, իրականացնելու ուսումնառությունն աշխատաժամանակի ընթացքում՝ աշխատանքային պարտականությունների պատշաճ մակարդակով իրականացման պարագայում և ստորաբաժանման ղեկավարի կողմից աշխատաժամանակի կարգավորման դեպքում:

2. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի վերապատրաստում իրականացնող դասախոսների 1 ժամի դիմաց վարձատրումն իրականացնել՝ հիմնվելով ԳՊՄԻ-ում գործող ժամավճարային սանդղակի վրա:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ, կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

6.1.ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ուսուցման կենտրոնի ստեղծման և կանոնակարգի հաստատման մասին (**Ձեկ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Ստեղծել և բուհում լեզուների ուսուցման կենտրոն:

2. Հաստատել և լեզուների ուսուցման կենտրոնի կանոնակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ, կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.2.ԼՍԵՑԻՆ.- «Հոգեբանական ծառայություն և խորհրդատվություն» կենտրոնի ստեղծման ու կանոնադրության հաստատման մասին: (**Ձեկ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Ստեղծել և բուհում «Հոգեբանական ծառայություն և խորհրդատվություն» անվանումով կենտրոն:

2. Հաստատել կենտրոնի կանոնադրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ, կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.3.ԼՍԵՑԻՆ.- Տնտեսական բաժնի վարիչի հաստիքի ստեղծման մասին (**Հաղ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ստեղծել ինստիտուտում տնտեսական բաժնի վարիչի հաստիք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 49 անդամներ, կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան